

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՆՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ  
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Բ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2011

**ՈԱՖԻԿ ԱՄՅԱՊԵՏՅԱՆ**  
*պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

**ՀԱՅ ԱԶԳԱՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԱՈՒՔԵԼ**  
**ԴՎԱՐԻԺԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԻ**

Առաքել Դավրիժեցին հայ միջնադարյան հարուստ պատմագրության խոշոր երախտավորներից է: XVII դարում հանդես եկան նաև այլ պատմիչներ, սակայն նրանց երկերը ո՛չ բովանդակությամբ և ո՛չ էլ իրենց պատմագրական արժեքով չկարողացան հասնել Դավրիժեցու երկի մեծությանը: Ղ. Ալիշանի բնութագրմամբ՝ Դավրիժեցին թե՛ իրենից առաջ և թե՛ հետո եղած պատմիչների մեջ լավագույնն է<sup>1</sup>: Լեոն Դավրիժեցուն համարում է «առաջնակարգ գրական մի աստղ, որ չունի իր նմանը թե՛ նախորդ դարում և թե՛ իր ժամանակակիցների մեջ»<sup>2</sup>: Իսկ Ս. Աբեղյանը բարձր է գնահատել Դավրիժեցու հայրենասիրությունը՝ գրելով. «Նորենացուց ավելի սրտառու է ողբում յուր հայրենիքը, որից ավելի գեղեցիկ չէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանաստեղծ ողբալ»<sup>3</sup>, կամ՝ «այդպիսի նկարագիրներ մեր պատմության մեջ քիչ կպատահենք Եղիշեի ժամանակից ի վեր»<sup>4</sup>:

Ա. Դավրիժեցու «Պատմության» ուշագրավ հետազոտություններ են կատարել Լ. Դանեղյանը<sup>5</sup>, Յ. Միրզոյանը<sup>6</sup> և ուրիշներ:

Ա. Դավրիժեցու երկում նկարագրված են հայ ժողովրդի՝ 1602-1662 թթ. պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրողությունները: Գիրքն ունի համարակալված 56 գլուխ և մի քանի չհամարակալված գլուխներ: Այժմ է ընկնում տվյալների բազմազանությամբ, որտեղ պատերազմական գործողություններին, երկրի ներքին

<sup>1</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 131:

<sup>2</sup> Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1969, էջ 353:

<sup>3</sup> Ս. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գ. II, Երևան, 1946, էջ 519:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 446:

<sup>5</sup> Տե՛ս Լ. Դանեղյան, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978:

<sup>6</sup> Տե՛ս Յ. Միրզոյան, Առաքել Դավրիժեցու պատմության առաջին հրատարակության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, N 2, Նույնի՝ Ինքնալրացում կամ մեկ նկարի պատմություն, «Եջմիածին», 1998, Զ, էջ 81-89:

վիճակին, տիրակալների քաղաքականությանը զուգահեռ տեղեկություններ են հաղորդվում ժողովրդագրության, տեղագրության, քաղաքների, տնտեսական կենցաղի, մասնավորապես արհեստների, առևտրի, ժողովրդի կենցաղի ու սովորույթների, նյութական մշակույթի, մասնավորապես եկեղեցաշինության, հոգևոր դասի գործիչների, նրանց տարազի, թանկարժեք քարերի, բնության երևույթների, հոգևոր-մշակութային արժեքների, ժողովրդական տոների, դավանաբանական և այլ հարցերի մասին՝ ընդգրկելով նաև հրաշապատում գրույցներ ու առասպելներ: Ա. Դավրիժեցու «Պատմությունը» միաժամանակ ժամանակագրական ճշգրիտ վավերագրություն է և արժեքավոր նյութեր է պարունակում ոչ միայն հայ, այլև օտար ժողովուրդների մասին:

Նրա վկայությունների մեծ մասն ունի դաշտային ազգագրական նյութերի արժեք, քանզի ազգագրական տեղեկությունները հիմնականում անձամբ ինքն է գրի առել. «Պատմության» մեջ հաճախակի են այսպիսի հավաստիացումները՝ «գոր տեսողքն պատմեցին ինձ» կամ՝ «գոր ինչ լուսք յակամատես պատմողաց՝ գայն գրեմք»<sup>1</sup>: Նա շրջել է պատմական Հայաստանի շատ վայրերում և հայերով բնակեցված երկրներում. եղել է Նախիջևանում, Ամասիայում, Սեբաստիայում, Սպահանում և Ջուղայում, Ուռհայում, Անկյուրիայում, Հալեպում, Երուսաղեմում, իր խոսքերով ասած՝ «յամենայն քաղաքս և գյուղս, թե յարևելից և թե յարևմտից»<sup>2</sup>:

Սույն հոդվածը գրելիս օգտվել ենք տարբեր հրատարակություններից<sup>3</sup>, բայց նյութի ըմբռնումը դյուրացնելու համար՝ հիմնականում Վարագ Առաքելյանի աշխարհաբար թարգմանությունից<sup>3</sup>: Հոդվածը շարադրել ենք ըստ հայ ազգագրության ոլորտների. տնտեսական կենցաղ, նյութական մշակույթ, ընտանեկան, հասարակական կենցաղ, հոգևոր մշակույթ:

**Երկրագործություն:** Պատմագիրը կսկիծով նկարագրելով մեծ բռնագաղթի աղետալի հետևանքները, գրում է, թե «հայոց վայելչատես աշխարհը, արգավանդ ու բերրի հողերը, արտերն ու անդաստանները և բազմապատիկ գյուղերն ու մեծատարած ավանները վերածվեցին ավերակների ու անմարդաբնակ վայրերի»: Այս դառնությունը խոսելով նաև ջալալիների կատարած վայրագությունների մասին՝ նշում է. «Երկրագործներն ու հողագործները սրանց ահից ու սարսափից փախան

<sup>1</sup> Տե՛ս «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավրիժեցույ», Վաղարշապատ, 1896, էջ 89, 86:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 416:

<sup>3</sup> Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990:

<sup>3</sup> Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1988:

լեռների խոռոչներն ու ամրացան: Ուստի չէին կարողանում հողագործությամբ զբաղվել. այդ պատճառով սերն ցանելը, հնձելը, կալուկուտը ամենևին վերացան, և սկսվեց հացի ու ամեն ուտելիքների սղություն և չէին ճարվում. եթե տեղ-տեղ ճարվում էր, այն էլ շատ թանկ գնով: Սա Միջերկրայքում [Հայկական լեռնաշխարհի միջնաշխարհում]: Այս շարունակում է. «սկսվեց համատարած մարդակերության աստիճանի սով և հայ բնակչության արտագաղթը սեփական երկրից դեպի Ռոմելի (Եվրոպական Թուրքիա), ոմանք Բուղդան (Սուդանիա), ոմանք Լեհաստան, ոմանք Կաֆու (Ղրիմ, Թեոդոսիա), ոմանք Պոնտոսի (Սև ծովի) ծովեզրը, ոմանք Թավրիզ ու Արդաբիլ և սրանց զավառներ» [Դավր., 78]: Դա 1606-1610 թթ. էր: Դավրիժեցին հավաստում է, թե հայերը խաղաղ պայմաններում ջանասիրությամբ զբաղվում էին հողագործությամբ, պարարտացնում էին ցանքատարածությունները գոմաղբով և մարդու աղբով: Ակնարկներ ունի այգեգործության և պտղաբուծության վերաբերյալ:

**Գինեգործություն:** Պատմագիրը հաղորդում է նաև, թե Սպահան քաղաքի կենտրոնում բնակեցված հայությունը հայտնի էր նաև գինեգործությամբ և մի շարք այլ արհեստներով, որը մեծ նախանձ ու չարություն էր առաջացնում տեղական մահմեդականության շրջանում: Որպեսզի նրանց հեռացնեն կենտրոնից, շահին՝ Շահ Աբաս Երկրորդին համոզում են, որ հայերը գինարբու ժողովուրդ են և վատ հետևանքներ են թողնում մահմեդական բնակչության մեջ: Շահը օրենք է հանում «... արգելեն և վերացնեն գինին, որ բնավ քաղաքում գինի չերևա, ոչ ոք բնավ խաղող չճմռի և գինի չանի, ոչ ոք չվաճառի և չխմի, գինու նշան կամ հոտ չերևա ո՛չ ռամիկների, ո՛չ իշխանների և, ոչ էլ հեծյալ սպայագործի մոտ [Դավր., 346]: Այս ավելացնում է, թե «ամեն մահմեդական մարդ, որ ցանկանում է գինի խմել, մտնում է հայերի տուն և գինի խմում, նաև նրանցից բարձր գնով գնում» [Դավր., 349]: Սպահանի կենտրոնի պարսիկները հայերին քաղաքի ծայրամասերը քշելու համար ամբաստանում են նրանց, թե «գինարբու ազգ են և միշտ գինով ջուրը պղծում են, որովհետև երբ խաղողը ճմլում են, քաղցուն գինի են անում, իսկ կնճիռը թափում են ջուրը, որով ջուրը պղծվում է: Իսկ երբ օղի են քաշում, մնացած մրուրը թափում են ջուրը, որով ջուրը պղծվում է: Իսկ երբ կամենում են գինու կարասը լվանալ, բերում, դնում են առվի մեջ մեկ-երկու օր թրջոց և ապա լվանում են և լվացաջուրը դարձյալ թափվում է առուն՝ ջրի մեջ, որով ջուրը պղծվում է» [Դավր., 350-351]:

Պատմագիրը ակնարկներ ունի այգեգործական գործիքների՝ կացնակի, մուրճ-կացնի, բահի, հոտոցի, փայտատի և այլ գործիքների մասին [Դավր., 115-118, 163, 165, 501-502]: Հիշատակվում է նաև հայ գյուղացիների գործածած գյուղատնտեսական գործիքներից՝ «կողովներ, քիեր, տապարներ, կացիններ, բահեր, փայտատներ, տների հիմքերի

համար բրիչներ» [Դավր., 481]: Բանջարաբոստանային կուլտուրաների մշակության մասին, գրում է, թե հայերը վարունգին խիար էին անվա-  
նում [Դավր., 472]:

Ի դեպ հայերն ունեցել են երկաթե կացնածև մի գործիք-զենք, որը միջնադարում *կացնակ* է կոչվել, իսկ XIX դարում պարսկահայերի շրջանում՝ *նաջախ*։ Սակայն այն օգտագործվել է ոչ այնքան որպես զենք, որքան որպես այգեգործական գործիք<sup>1</sup>:

**Անասնապահություն, ոչխարաբուծություն:** Պատմագիրը գրում է, թե անչափ ծանր հարկերի, հատկապես ոչխարի հարկի պատճառով Պարսկաստանի հայ բնակչությունը ծայրահեղ աղքատության էր հասել XVII դարի 20-ական թթ.: Մինչև այդ հարկերի նշանակումը հայերը «ու-  
նեցվածքի և գույքի տեր էին՝ ունեին հոտով ոչխար՝ հազար հինգ հար-  
յուր գլուխ, մատակ ձիերի երամակներ և շատ խոշոր անասուններ՝ լծկան ու կթան, արտ ու այգի, ջրաղաց, ոսկի ու արծաթ և տան շատ կահկարասիներ: Այս ամենը վերացավ հարկերի ու պարտքատերերին ունեցվածքը վաճառելու պատճառով» [Դավր., 143]: Պատմագիրը նշում է, որ «Փիլիպոս կաթողիկոսի օրոք 1660-ական թթ. Ս.Էջմիածին վանա-  
կան համալիրը ուներ կովերի նախիրներ, ուղտեր, ջորիներ, մատակ ձիերի երամակներ, ոչխարների հոտեր, խոշոր անասունների նախիր-  
ներ...» [Դավր., 270]: «Սուրբ աթոռ Էջմիածինը ուներ 2 գմբեթավոր ձիթ-  
հաներ, արտեր, այգիներ, ծաղկաստաններ» [Դավր., 251, 270]:

Պատմագիրը մեկ այլ դրվագում խոսելով վարագա վանքի կո-  
ղոպտման, Ավագ Սուրբ Նշանը խոշաբի բերդը տանելու, այնտեղից վան քաղաք բերելու պատմության, դրա պատճառների ու հետևանքնե-  
րի մասին՝ գրում է. «Այն օրից հետո, երբ Սուլեյման բեկը Սուրբ Նշանը վարագից հանեց, բերեց խոշաբ, գրեթե ցատումն ու պատուհասը տե-  
ղաց, լցվեց խոշաբի երկիրը, որովհետև հողը բերք չէր տալիս, իսկ եթե լինում էր, հազիվ սերմը վերցնում էին..., կենդանիները չէին աճում, այլ դեռևս պակասում էին... Սուրբ Գրիգորի պասին [հունիսի երկրորդ կե-  
սին] սաստիկ ու անչափ ծյուն եկավ... բոլոր անասունները առանց ար-  
րոտի մնացին ծյան շատության պատճառով, որի հետևանքով անա-  
սունները սովամահ եղան, անասունների անկում եղավ, ով հազար գլուխ ոչխար ուներ, հարյուր գլուխ հազիվ մնաց...» [Դավր., 404]:

**Արհեստներ և առևտուր:** Պարսիկ պատմաբանները Շահ Աբասի կողմից հայ բնակչության բռնագաղթը իրականացնելը և Պարսկաստա-  
նի խորքերը ըջելը պայմանավորում էին հիմնականում ռազմավարա-  
կան նկատառումներով<sup>2</sup>: Մինչդեռ Շահ Աբասը հետապնդում էր նաև ա-

վելի հեռուն գնացող նպատակներ՝ ձեռնարկելով հարյուր հազարավոր մարդկանց իրենց բնակավայրերից բռնությամբ տեղահան անելու և իր երկրում տեղավորելու դժվարին գործը: Շահի հեռավոր նպատակներից էր՝ զարկ տալ երկրի արտադրողական ուժերի զարգացմանը, հողա-  
գործության, արհեստների, առևտրի ծաղկմանը, Պարսկաստանի կենտ-  
րոնական նահանգների և մասնավորապես մայրաքաղաքի բարգավաճ-  
մանը՝ ի հաշիվ ծայրամասային և նվաճած շրջանների<sup>1</sup>: Պատմագիրը բառացիորեն գրում է. «Բոլոր քարագործ արհեստավորներին անջատե-  
ցին ժողովրդից, տարան Սպահան քաղաքը այն արհեստի համար, որ պետք էր գալիս այնտեղ թագավորի տան շինության և ողջ պարսից ազ-  
գի համար: Սրանց Սպահանում բնակեցրին» [Դավր., 356]: Ապա շարու-  
նակում է. «Իսկ քարհատ արհեստավորներին, որ բերին Սպահան քա-  
ղաքը, քաղաքի հարավային կողմում՝ գետի այն կողմը, բնակեցրին այն տեղում, որտեղ «գավր» [այն պարսիկներն են, որոնք հետևել են գրա-  
դաշտական կրոնին, մահմեդականություն չեն ընդունել – Ռ. Ն.] ազգն էր բնակեցվել: Նրանց կից նաև նրանց հետ խառը բնակեցրին քարհատ հայերին [Դավր., 357]: Շահի նպատակն էր՝ «ըջված, տարված ժողո-  
վուրդները նրա համար լինեն կայուն հարկատուներ, ծառաներ և հողա-  
գործներ մինչև հավիտյան» [Դավր., 41]:

Հայ արհեստավորներն ու առևտրականները միայն Պարսկաստա-  
նին չէ, որ հրապուրել են: Օսմանյան սուլթան Սելիմը 1513 թ. Պարս-  
կաստանից գրավելով Թավրիզ քաղաքը, այնտեղի հմուտ արհեստա-  
վորներին՝ 3000 հայ ընտանիք, գաղթեցրեց Կոստանդնուպոլիս<sup>2</sup>:

Պատմագիրը խոսում է պարսկական արքունիքում և երկրում մոտ սպիտակեցնելու արհեստը հայ արհեստավորների մենաշնորհը լինելու մասին [Դավր. 186], դարբնությունը հայ արհեստավորների շնորհիվ երկրում լայն տարածում ունենալու մասին: Անգամ Փարիս երկրամա-  
սի հայերով բնակեցված առաջին հայկական գյուղը հայտնի էր Դարբնի գյուղ անվամբ [Դավր., 35]:

Դավրիժեցին տարբեր առիթներով նկարագրել է բռնագաղթից ա-  
ռաջ Ջուղայի փարթամ վիճակը, որը «մեծ և նշանավոր բնակավայր էր այն ժամանակ մեր արևելյան երկրում, քանզի այն ժամանակ բնակչու-  
թյունը տակավին ըջված չէր Պարսկաստան» [Դավր., 22]: Իրոք, Ջուղան եղել է հատկապես մետաքսի առևտրի խոշոր կենտրոն: Նրա վաճառա-  
կանները ակնառու դեր են խաղացել մետաքսի միջազգային առևտրում: Իբրև Վենետիկի և Ջենովայի՝ Ասիայում մեծ համբավ ունեցող առևտրա-  
կան գործակալներ, Ջուղայի հայ վաճառականները Շահ Աբաս Ա-ի ու-  
շադրությունը գրավել էին նրա թագավորության հենց առաջին տարիներ-

<sup>1</sup> Տե՛ս Վ. Բրոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 80:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Առաքելյան, Պարսկաստանի հայերը: Նրանց անցյալը, ներկան և ապագան, մ. Ա., Վիեննա, 1911, էջ 7-9:

<sup>1</sup> Տե՛ս Լ. Դանեղյան, նշվ. աշխ., էջ 83-84:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Առաքելյան, նշվ. աշխ., մ. Ա, էջ 23:

րից: Շահ Աբասը պետության ներքին ու արտաքին առևտուրն աշխու-  
ժացնելու նպատակով ձգտում էր դեպի Իրան հրապուրել հայ առևտրա-  
կանությանը: Հայտնի է, թե հայ առևտրականներն ինչպիսի ճոխությամբ  
ընդունեցին նրան Ջուղայում. «Շահի ընթացուղին զարդարել էին, գե-  
տեզրից մինչև խոջա խաչիկի ապարանքը փռել էին գորգեր թագավորի  
ոտքերի տակ, թանկարժեք, մեծահարգի ու վայելուչ կերպասներ, որոնց  
վրայով թագավորը անցավ...» [Դավր., 31-32]: Այս ճոխության մեջ էլ  
ծնվում է Շահ Աբասի դիվային ծրագիրը՝ Ջուղայի հայերին Սպահան  
տեղափոխելու մասին: Մի կողմ թողնելով այդ տեղափոխության ռազ-  
մական նպատակները՝ Շահ Աբասը դրանով ցանկանում էր նաև ջուղա-  
յեցի վաճառականներին օգտագործել երկրի ներքին և արտաքին  
առևտուրն աշխուժացնելու համար: Միաժամանակ, Թուրքիային տնտե-  
սական հարված հասցնելու նպատակով նա ձգտում էր ջուղայեցիների  
օգնությամբ Իրանի արտաքին առևտրի ուղիները թուրքական տիրույթ-  
ներից շեղել դեպի Պարսից ծոց:

1529 թ. ջուղայեցի խոջա Նազարին առևտրական արտոնություն-  
ներ շնորհելու մասին հրովարտակը՝ ինքնին վկայում է, թե ինչպիսի  
նշանակություն էր տալիս շահը Ջուղայի վաճառականների գործու-  
նեությանը և նրանց իր կողմը գրավելու խնդրին: Նա ձգտում էր Ջուղա-  
յի միջոցով Եվրոպա-Ասիա մետաքսի առևտրական ուղին Թուրքիայից  
տեղափոխել Պարսկաստան, ապա տեղափոխել Սպահան՝ այն դարձ-  
նելու միջազգային առևտրի խոշոր կենտրոն: Պատմիչը նշում է, որ  
«տեսնելով այդքան հարստությունն ու վայելչությունը, շահը հաստա-  
տապես չար որոշում ընդունեց, որ պիտի իրագործեր հարմար ժամին  
[Դավր., 31-32]:

Պատմագրի հաղորդման համաձայն եվրոպա-ասիական Թուրքիա-  
յով անցնող մետաքսի առևտրական տարանցիկ ճանապարհները հեռու  
էին անվտանգ լինելուց: Նրա հաղորդմամբ վանով անցնող Թավրիզի  
քարավանները երկար ժամանակ հարձակման էին ենթարկվում խոջա  
բերդի տեր Սուլեյման-բեկի կողմից, որը «քարավանների բեռները  
բռնությամբ բացում էր, ինչ որ բան հավանում էր, չնչին գին էր շարտում  
տիրոջը և ապրանքները կորզելով տիրոջից, սեփականացնում էր՝  
պատճառաբանելով, թե գնեցին» (էջ 385): Իսկ փաշայությունից  
գրկված Չոմարը «սրիկա, ելուզակ, զոդ ու ավազակ, աշխարհավեր  
մարդկանց հետ լեռներից իջնում ու դարանամուտ էր ճանապարհների  
վրա և երթևեկող քարավանների վրա հարձակվելով, ոմանց կոտորում  
էր, ոմանց փախուստի մատնում և ոսկի, արծաթ և ուրիշ բաներ, ինչ կա-  
մենում էր, առնում, գնում էր» (էջ 386):

<sup>1</sup> Տե՛ս Տեր-Չովհանյանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. 1, Նոր  
Ջուղա, 1880, էջ 158-159:

Շահի մենաշնորհը հանդիսացող մետաքսի առևտուրը կատարվում  
էր գլխավորապես հայ վաճառականների միջոցով: Իրանի հայ վաճա-  
ռականները հաճախ էին լինում Ստամբուլում, Իզմիրում, Էրզրումում,  
Բութայում և այլուր [267]: Մետաքսից բացի հայ վաճառականները Իրա-  
նից արտահանում էին կերպաս, թավիշ, գորգեր, բուրդ, ծխախոտ, չոր  
միրգ և այլն:

**Չափ ու կշիռ:** Պատմագիրը հակիրճ, բայց և ուշագրավ տեղեկու-  
թյուններ է տալիս ժամանակի չափ ու կշիռների վերաբերյալ: Մեծ տա-  
րածում էր ստացել կշռի միավորներից *մսխալը*, որ ծանրության չափ էր  
և կշռում է 4.08 գրամ, *լիտրը*՝ մոտ 4.800 գրամ [Դավր. 470]: Բարձրու-  
թյան միավոր էր *կանգունը*, որը տղամարդու արմունկից մինչև միջնա-  
մատի ծայրն է [Դավր. 238]: Որպես երկարության միավոր գործածվել է  
*գազ* և *հալաքի* եզրույթները: Գազը 1 մ 12 սմ-ին է հավասար, իսկ *հալա-  
քին* 94 սմ-ին հավասար արաբական երկարության միավոր է:

**Նյութական մշակույթ:** Պատմագիրը գյուղական մեծ բնակավայրե-  
րին *շեն* անունն է տալիս [Դավր. 36]: Նյութական մշակույթից առանձ-  
նապես ներկայացնում է հայոց բնակարանը՝ իր բաղադրատարրերով,  
գործառությանին դերով, պարսպապատ բակերով, հայկական զմբեթա-  
վոր եկեղեցիները՝ եկեղեցապատկան շինություններով, տնտեսական  
կառույցներով, հյուրատներով: Ակնարկներ ունի արտադրական կա-  
ռույցների՝ ձիթահանների, ջրաղացների և այլնի վերաբերյալ:

Ուշագրավ տեղեկություն է տալիս Գառնի զավառում փորածո քա-  
րայր-բնակարանի մասին, «որը գետնափոր էր և մեծ, որը բացի մուտ-  
քից ոչ մի տեղից որևէ ծակ կամ օղանցք կամ զովամուտք չուներ, հին  
ժամանակներից իշխանները փորել էին և սարքել իրենց ինչ-որ պետքե-  
րի համար» [Դավր., 74]: Արձանագրում է ճգնավորների, անապատա-  
կանների կացարանները՝ դրանք անվանելով *խուղ* [Դավր., 210]: Ըն-  
դարձակ հաղորդում ունի Գառնիի, Գեղարդի և այլ վայրերում բարձրա-  
բերձ քարայր բնակավայր-բնակարանների մասին [Դավր., 49-52]:

Մեծ բռնագաղթի ժամանակ Իրան գաղթեցված հայ բնակչությունը  
տեղաբաշխվեց երկրի զանազան շրջաններում, հիմնականում՝ Սպա-  
հանում: Բռնագաղթի արգասիքը հանդիսացավ հատկապես Նոր Ջու-  
ղան, որը դարձավ իրանահայ հայտնի գաղթօջախներից<sup>1</sup> մեկը: Շահ Ա-  
բաս Ա-ն հոգ տարավ ջուղայեցիներին տեղավորելու Ջայնդեռուզ գե-  
տի ափին, Սպահանի մոտ՝ հողաբաժին հատկացնելով իր անձնական  
լավագույն հողերից, որոնց մի մասը ստացան իբրև պարգև, իսկ մյուս  
մասը ձեռք բերեցին դրանով<sup>2</sup>: Դավրիժեցին սքանչելի նկարագրություն

<sup>1</sup> Նոր Ջուղայի մասն տե՛ս Գ. Տեր-Չովհանյանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ  
յԱսպահան, հ. 1, Նոր Ջուղա, 1880, Ա. Գ. Արրահամյան, Պարսկահայ գաղթօջախը.  
Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա., Երևան, 1964:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Տեր-Չովհանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 36-38:

է թողել Նոր Ջուղայի կառուցման վերաբերյալ. «Նրանք շինեցին շենքեր ու իրենց համար բնակարաններ՝ հրաշալի ձևավորումով, կամարակապ փողոցներով, թևավոր ապարանքներով, հովասուն դստիկոններով, բարձրաբերձ ու արքայավայել շինվածքներով, զարդարեցին ոսկու և լաջվարդի պեսպես երանգ ունեցող ծաղիկներով, որ տեսնողի աչքերը խողտում էին» [Դավր., 60]: Այնուհետև՝ «Սրանց մեան ըստ Աստծու փառքի և արժանիքի հրաշակերտ հորինվածքով, երկնաման խորաններով, բարձրաբերձ կաթողիկեներով եկեղեցիները շինեցին, որոնք ամբողջովին ծաղկազարդված էին տեսակ-տեսակ գույներով, ոսկով ու լաջվարդով, տիրոջ մարդեղության գործերով, սրբերի պատկերներով: Եվ բոլոր եկեղեցիների [զմբեթ] գլխին դրված էր նրանց եկեղեցիների [Յայաստանում ունեցած] սուրբ խաչի նշանը իբրև պսակ ու պարծանք քրիստոնյաների» [Դավր., 60]:

Դավրիժեցին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև եկեղեցապատկան շինությունների, այգեստանների, հոգևորականների կյանքի մասին և այլն: Նա էջմիածնի վանքի տնտեսական շենքերից թվարկել է սեղանատունը, փռնատունը, տնտեսատունը, ամբարանոցը և բնակության շենքերից պարիսպները, խուցերը, ժամատունը, և շատ այլ տներ իրենց և հյուրերի համար (Դավր., 234): Ըստ Դավրիժեցու հավաստման՝ «Յայոց վանքերի յուրաքանչյուր սևագլուխ ուներ իր առանձին ունեցվածքը, այգին և բուրաստանը, փեթակը և տունը, մառանը և ամբարանոցը»: «Այս բոլոր շինվածքներից միայն պարիսպն էր հողից շինված, իսկ մնացած բոլորը շինվեցին տաշված քարով, թրծված աղյուսով, կրով ու գաջով, գեղեցիկ ու վայելուչ հորինվածքով» [Դավր., 242]: Ա. Դավրիժեցու նկարագրած միջնադարյան հայ ժողովրդական բնակարանը միանգամայն համապատասխանում էր XIX դարի և XX դարի առաջին կեսի ճարտարապետության ցուցանիշներին: Փոփոխությունները մեծ չեն, գլխավորապես վերաբերում են հարկաբաժինների բազմացմանն ու հարկայնությանը: Այսպիսի շենքերը ունեցել են գլխավորապես ունևոր տնտեսությունները և վանական միաբանությունները:

Խոր ցավով ու դառնությամբ է նկարագրում անառիկ, քարեղեն, բերդերի ավերումն ու տապալումը, «Յայոց աշխարհի բարձրաբերձ, գմբեթաշեն, կոփածո, վեներով կառուցված եկեղեցիների կործանումը»:  
Ա. Դավրիժեցին մատնանշում է բնակարանի կահույքի որոշ տեսակներ: Յակառակ այն տեսակետի, որ հայ իրականության մեջ բարձրադաս սեղաններ և աթոռներ միջնադարում չեն արձանագրվել, պատմագիրը հաղորդում է, թե վանքերում սովորություն կար շինել քարե ընդհանուր բարձրադաս սեղաններ ու նստարաններ: Բարձրադաս սեղան և աթոռ օգտագործվել են եկեղեցիներում: Դրանք քարաշեն հասարակ աթոռներ էին, թիկնաթոռներ, քանդակապատկերներով բազկաթոռներ:

XIX դարի առաջին քառորդում քաղաքներում գործածվող բարձրադաս սեղանները գյուղերում հազվադեպ էին պատահում: Պատճառն այն էր, որ ժողովուրդը մեծ մասամբ դեռ պահպանում էր համեստություն մատնանշող ծնկած և ծալապատիկ նստելու սովորույթը: Տղամարդիկ նստում էին ցածրիկ նստարաններին կամ ծալապատիկ: Այդ պատճառով գործածվում էին կարճատև սեղաններ (խոնջա)<sup>1</sup>: Գյուղական վայրերում ճաշասեղանի դեր են կատարել նաև կարճատև քուրսին իր փռոցով, զարդանախշված փայտե և պղնձե սկուտեղները, հասարակ և ասեղնագործված սփռոցները, կաշվից և մորթուց պատրաստված փռոցները, ճիպոտներից կամ ծղոտից հյուսված սալաները:

Դավրիժեցին նկարագրություններ է թողել տարբեր խավերին պատկանող զգեստների, կահույքի, տնային գույքի մասին: Հիշատակում է *խիլա* անվամբ զգեստը [Դավր., 36]: *խիլան* քանկագին հագուստ էր, որ թագավորները նվիրում էին իրենց անվանի տիտղոսավոր հպատակներին [Դավր., 36]: Անդրադարձել է կրոնավորների զգեստներին: Նրանք կրում էին «սքեմ» (պարեգոտ), քուրծ (այծի մազից հյուսված կոպիտ զգեստ), որ մազից է, հագնում էին զգեստների տակ, մերկ մարմնի վրա: Առհասարակ, ըստ պատմագրի հաղորդման՝ «բոլորի զգեստները ամբողջովին բրդից պետք է լինեն և ոչ բամբակեղեն. բրդից շապիկը պետք է արվի երկար պեծեղավոր մինչև ոտքերը, իսկ գոտին կաշվից: Յուրաքանչյուր ոք իր զգեստներով պետք է շրջի. եթե մենակյաց է քուսիթայով և քառակուսով, եթե քահանա է՝ փիլոնով, եթե արքայացի է՝ փիլոնով (շուրջառ) և վեղարով [եկեղեցականի մինչև մեջքը հասնող գլխի ծածկոց]: Վեղարն ու փիլոնը հագնում էին միայն աղոթքի ժամանակ, ազատ ժամին, չէին հագնում և շրջում էին իբրև աշխարհականներ [Դավր., 204]: Պատմագրի նշած *քուսիթան* գլխի կնգուղն է, *քառակուսին*՝ ըստ երևույթին չորս եզրանի գլխարկը: Տրեխն է եղել հիմնական կոշկատեսակը՝ *չարոխ* անվամբ հիշատակված [Դավր., 145]:

Պատմագիրը դառնությամբ խոսելով ջալալիների ավերիչ գործողությունների ու թալանի, կողոպուտի մասին՝ նկարագրում է Օհանավանքի թաքստոցների հայտնաբերման և պահված հարստության՝ հագուստեղենի, պղնձեղենի, անոթների, խաչերի, սկիհների, շուրջառների, բուրվառների, թանկագին գրքերի, վանքի սրբությունների՝ Քրիստոսի երեսի վարչամակի (ծածկոց), Քրիստոսի փշյա պսակի մի մասի, սուրբ Ստեփանոս Նախավկայի աջի հափշտակման մասին [Դավր., 73-74]:

Շահ Աբասը իր երկիր՝ Սպահանի արքունի գանձարան-թանգարան էր տեղափոխում հայկական եկեղեցիների ողջ հարստությունը, այդ թվում՝ սպասքեղեն, անոթներ, սրբություններ՝ խաչ, սկիհ, ավետարան,

<sup>1</sup> Տե՛ս Վ. Բոլյան, Յայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 90:

բուրվառ, շուրջառ, որոնք մեծարժեք ու թանկագին էին և զանազան ընդելուզներով, ակներով, մարգարիտներով հորինված [Դավր., 105]:

**Ընտանեկան-հասարակական կենցաղ:** Պատմագիրը անդրադառնում է նաև սոցիալական հարաբերությունների ցավոտ կողմերին՝ մատնությանը, նենգությանը, ծախվածությանը, չարիքներ, որոնք և ըստ հեղինակի դարձել են պետականության կործանման, հավատախախտության, հավատափոխության դրդապատճառներ: Անհանդուրժելի համարելով նենգությունն ու անհնազանդությունը, զրպարտությունը, մատնությունը՝ կոչ էր անում լինել միաձույլ, միաբան՝ հանուն ազգային միասնության, մանավանդ օտար և տարակրոն էթնիկ միջավայրում: Նա ցավով է գրում, թե «Հայոց ազգից ոմանք իրենց կամքով ու մատով կուրացրին իրենց աչքերը, որովհետև իրենք կործանեցին իրենց թագավորությունը իրենց նենգությամբ, անհնազանդությամբ և եղան այլ ազգերի ու թագավորների ոտքերի կոխան, ծառաներ, գերիներ և երբ ինչ-որ նեղություններ են վրա հասնում՝ որևէ տեղից օգնություն չգտնելով ու ճարահատ մնալով փախստական լինելով ճողոպրում են այստեղ-այնտեղ» [Դավր., 123]: Ազգի համար մեծ աղետ էր համարում մանկահասակ ուսուցիչի և դուստրերի հանձնումը պարտքի դիմաց որպես փրկագին կամ գրավական [Դավր., 127-128] կամ էլ մատնության, զրպարտության պատճառով ընտանիքներով դավանափոխ լինելը, մահմեդական դառնալը և թլպատվելը [Դավր., գլ. ԺԳ, ԺԴ]: Նա ակնարկներ ունի Տիգրանակերտ քաղաքում մեծ և բազմանդամ ընտանիքներով ապրելու սովորույթի մասին [Դավր., 412-413]:

Ա.Դավրիժեցին արենակցական կապեր ունեցողներին ազգակից է համարում: Պարսիկները իմանալով, որ հայոց ազգակցական համակարգի ներսում գոյություն է ունեցել հողի ու գույքի ժառանգման ազգակցական իրավունք՝ ահաբեկման միջոցով ձգտել են օգտվել այդ իրավունքից: Դավրիժեցու վկայությամբ ոմն պարսիկ զրպարտությամբ դիմելով մի հայի, ասում է, թե «քո ազգականն եմ, քո ամեն ինչը, բոլոր ունեցվածքը հասնում է ինձ, տուր» [Դավր., 63]: Պարսիկ դատավորները նպաստում էին, որ ժողովուրդը կողոպուտի ենթարկվի նաև այս ձևով: Օրենք են դարձրել պարսկացած հայի սեփականությունը խլել նրա ազգականներից: Այդ ապօրինությունը տարածում էին նույնիսկ կրոնափոխ եղածների մեռած ազգականների վրա՝ սրանց գույքը հափշտակելու համար [Դավր., 63-64]:

Առաքել Դավրիժեցին խոսում է նաև հայ ընտանիքի, ընտանեկան կենցաղում տեղ գտած անբարո բարքերի, հուղարկավորման ավանդական սովորույթների ոտնահարման, հյուրընկալման, ժողովրդական բժշկության մեջ թանկագին քարերի՝ հմայական ու բուժիչ հատկությունների կիրառման և այլ հարցերի մասին: Նա խարազանում է ընտանիքի և ամուսնական սովորությունների մեջ պահպանված անբարո

բարքերը, ամուսնալուծությունը: «Ոմանք կնաթող էին, ոմանք երկկին, չիաս և ազգապղծության մեղքերով շաղախված» [Դավր., 230]: Դավրիժեցին ցավով է արձանագրում, թե մահմեդականների հետ միևնույն թաղամասում բնակվելը պատճառ էր դառնում խառն ամուսնության և որպես հետևանք՝ մահմեդականացման: «Եթե քրիստոնյաների ուսուցիչը սիրում են մահմեդականների դուստրերին կամ թե մահմեդականների ուսուցիչը սիրում են քրիստոնյաների դուստրերին, մահմեդականները ծածուկ ու զաղտնի հնարքներով այնքան էին խոսում քրիստոնյաների ուսուցիչի և դուստրերի հետ, մինչև որ նրանց կամքն ու հոժարությունը փոխում էին ըստ իրենց ցանկության, ապա՝ համաձայնեցնելով դարձնում էին մահմեդական [Դավր., 353-355]:»

Հայ աղջիկները միայնակ փողոց դուրս գալու, երթևեկելու իրավունք չուներին [Դավր., 416]: Ցավով էր խոսում Սյունիքի եկեղեցականների մեջ տիրող վարք ու բարքի մասին: Մեկ այլ տեղում նշում է, թե ինչպես չբերությամբ տառապող, այլազգի, այլադավան մահմեդական ընտանիքները հավատում են հայ վարդապետների աղոթքի բարերար ներգործությանը, վարդապետի աղոթքով հղիանում է ամուլ համարվող մահմեդական կինը և նրա աղոթքը ամոքիչ ու բուժիչ է համարվել ամուսնային դեմ [Դավր., 217]: Պատմագիրը գրում է, թե այլադավան ընտանիքը հանուն ժառանգի «ուխտ է անում բարություն անել, հյուրեր ընդունել, անօթևաններին տեղ տալ իրենց հարկի տակ», «ամուլ կանայք Փլիպոս կաթողիկոսի աղոթքներով բուժվեցին» [Դավր., 254]:

Պատմագիրը մերկացնում է Լվովում Նիկոլ Եպիսկոպոսի անօրեն, կաշառակեր գործողությունները: «Փողի համար չէր թողնում մեռելներին թաղել և երբ փողն առնում էր ըստ իր ցանկության, ապա հրաման էր տալիս թաղման և գերեզմանի տեղ հատկացնելու համար: Թաղելուց հետո, երբ կամեցնում էին գերեզմանին տապանաքար դնել, այդ պատճառով երկրորդ անգամ դրան էր առնում: Այդ նույն պատճառով պսակները, մկրտությունները խափանվեցին, տանում էին այլ քաղաքներ պսակում ու մկրտում, մեռածներին էլ այլ քաղաքներ էին տանում, թաղում:

Լվովում Նիկողայոս Եպիսկոպոսի կաշառակերության և կաթուղի հավատք ընդունելու պատճառով խափանվում էին հայոց ամուսնական, մկրտության և հաղորդության կարգերը: Այդ պատճառով «Գաղտնի տանն էին կատարում պսակադրությունները»: Հայ աղջիկները փողոց դուրս գալու, երթևեկելու իրավունք չուներին: «Բազմաթիվ երեխաներ մեռնում էին առանց մկրտության, շատ երեխաներ անկնունք էին մնում մինչև 15-16 տարեկան հասակ: Բազմաթիվ հիվանդներ մեռնում էին առանց հաղորդության, իսկ շատ մեռելներ տարիներ անթաղ էին մնում: Մեռելներին դնում էին փայտյա դագաղի մեջ և դագաղը լցնում էին կուպրով մինչև որ մեռելին ծածկում էր, ապա դնում էին սառը տեղ

ու պահում՝ սպասելով տիրոջ այցելության...»: Կային ընտանիքներ, որոնք մեռած հարազատների դիակները պահում էին տանը անգամ 10 շաբաթ [Դավր., 297-298]:

Պատմագիրը ուշագրավ նկարագրություն է թողել հայ ժողովրդի սովորությունների մեջ առանձնահատուկ տեղ գրավող դիմավորման-ընդունելության ծիսակատարությունների մասին: Դրանք ընդհանուր առմամբ բաժանվում էին երկու մասի՝ պաշտոնական և կենցաղային: Պաշտոնական ընդունելության մեջ մտնում էին տոհմավազների, ռազմական առաջնորդների, իշխանների ու թագավորների կողմից իրենց հավասարների, իրենցից ցածր և բարձր աստիճան ունեցողներին ընդունելու կարգերը: Այդ բոլոր դեպքերում պաշտոնական շրջանները հազարամյակների ընթացքում մշակել են վարմունքի ձևեր, հավասարը հավասարին և անհավասարին ընդունելիս ցուցաբերել են տարբեր ծիսական արարողություններ: Այսպես, ներկայացնելով ջուղայեցիների պաշտոնական հյուրընկալության ավանդույթը՝ պատմիչը նկարագրում է Շահ Աբասին դիմավորելու արարողությունը: Պահի հանդիսավորությունը ընդգծելու համար նշում է, որ բոլորը տոնական զգեստներով ու պատշաճ հագուկապով էին մասնակցում միջոցառմանը. «Իշխանները, ծերերը երիտասարդները զարդարանքներով, զենքերով, ոսկեհուս սքանչելի հանդերձներով պճնագարդված ընդառաջ էին գնում: Շահի ընթացողին զարդարել էին գետեզրից մինչև խոջա խաչիկի ապարանքը, փռել էին գորգեր թագավորի ոտքերի տակ, թանկարժեք, մեծահարգի ու վայելուչ կերպասներ: Պատանիներն ու աղջիկները մատուցում էին քաղցրահամ մրգեր, համադամ ու անուշաբույր ուտելիքներ, ծաղկահամ գինիներ»: Ներկա էր նաև հոգևոր դասը՝ «քահանաները՝ վառված մոմերով, խուկներով ու կնդրուկներով», և աշխարհիկ երգիչները, որոնք առջևից ընթանալով՝ բարձրաձայն երգում էին: Արհեստագործների քաղաք համարվող Ջուղայի նշանավոր մարդիկ շահին թանկարժեք նվերներ են մատուցում՝ ոսկե զարդեր, շքեղ կերպասներ, գորգեր: Այնուհետև երեք օր հյուրընկալում ու հյուրասիրում են ընտիր կերակուրներով ու գինիներով (Դավր., 31-32): Շահը նախանձով է լցվում հայ բնակչության բարեկեցիկ ու հարուստ կյանքի հանդեպ, որն էլ առիթ եղավ բռնագաղթի կազմակերպման համար:

Դավրիժեցին հանգամանորեն թվարկում ու ներկայացնում է Փարիս և Բուրվարի գավառների հայաբնակ վայրերը, ինչպես օրինակ, Դարբնի, Փառշիշ, Փահրան, Խոռոմապատ և այլ գյուղերը, նրանցում հայկական մի քանի սովորությունները: Օրինակ՝ Խոռոմապատ գյուղում պարսից Շահ Աբասը, իբրև մի անցորդ, հայերի տրամադրվածությունը իր հանդեպ իմանալու նպատակով իջևանատեղ է խնդրում գյուղացիներից ի սեր շահի: Գյուղի տղամարդիկ զբաղված լինելով շահի ծանր հարկերն ու տուրքերը վճարելու, թագավորի կարիքները հոգալու

հարցով՝ անուշադրության են մատնում անցորդին: Սակայն նույն գյուղից մի տարեց կին օտարականին [շահին,- Ռ. Ն.] ասում է. «Եկ որդյակս, եկ գնանք մեր տուն, եղիր մեզ հյուր: Եվ կինը շահին առավ տարավ իր տունը: Շահը այնտեղ մնաց մինչև երեկո: Պառավի ողջ ընտանիքը մեռել էին, ուներ միայն մի որդի, որը գյուղի նախորդըն էր դարձել խիստ աղքատ լինելու պատճառով: Նրա վարձքն էր ամեն տնից մի հաց հավաքելը, հավաքած տասնհինգ հացերը բերեց դրեց հյուրի առջև, իսկ պառավն էլ բացեց թոնիրը, հանեց պուտուկով եփված կորկոտե ապուրը, որը ոմանք վռոշ են կոչում, շահը հացով կերավ այդ կերակուրը [Դավր., 142]: Սա էլ հայկական հյուրասիրության մեկ այլ դրվագ էր:

Պատմագիրը իր երկուն անդրադառնում է նաև պետական և համայնքային բազմաթիվ պաշտոնների բացատրությանը, անվանումներին:

**Խոնդկար** – թուրքական սուլթանների ամենապատվավոր տիտղոսն էր, որ ուներ միահեծան թագավոր, արքա նշանակությունը: Խոնդկարը իրավունք ուներ օրական տասնչորս մարդ սպանելու [Դավր., 31]:

**Փաշա, քեհիա** – հազարապետ:

**Դուլար, աղասի** – հավատարիմ ծառաներից կազմված զինվորների հրամանատար: Շահի հավատարիմ ծառաները հետագայում դառնում էին շահի թիկնապահական գնդի զինվորներ, մի տեսակ ենիչերիներ [Դավր., 534]:

**Սանջախ բեկ** – կուսակալ [Դավր., 70]:

**Դադի** – հոգևոր դատավոր [Դավր., 414]:

**Ենիչար աղասի** – ենիչերիների պետ:

**Չորվաջի** – ենիչերիների հարյուրապետ:

**Սուֆթի** – արաբերեն նշանակում է աստվածաբան, դուրանի մեկնիչ: Զոգևոր և իրավական հարցերում վճիռ կայացնող [Դավր., 414]:

**Սուդառիսներ** – արաբերեն ուսուցչապետ, աստվածաբան [Դավր. 433]:

**Սուլա և մուդրի** – դուրան կարդացող [Դավր. 433]:

**Կանաչագալուխ** – այդպես էին կոչվում մահմեդական այն հոգևորականները, որոնք ըստ ավանդության մահմեդական կրոնի հիմնադիրներից մեկի՝ Ալիի սերունդներն էին: Դրանք առանձին արտոնություններ ունեին և կրում էին կանաչ գլխափաթաթան (չալմա): Սրանք հայտնի էին սեիդներ անվամբ [Դավր., 413]:

**Ջաշի** – մուսուլմանիկ [Դավր., 425]:

**Չաջի** – արաբերեն նշանակում է մահմեդական սրբավայր՝ Մեքքա, ուխտագնացություն կատարած անձ: Դայերս Երուսաղեմ ուխտագնացություն կատարած անձին մահտեսի ենք անվանում [Դավր., 415]:

Դավրիժեցին ԾԳ գլխում շատ ուշագրավ մի թեմայի է անդրադառ-



նում՝ թանկագին քարերին և դրանց զանազան հատկություններին<sup>1</sup>: Այստեղ նա նախ տալիս է թանկագին քարերի անունները, ապա նկարագրում դրանց արտաքին տեսքը, գույները, տարատեսակները, առաջացման վայրը, մշակման ձևը, «բուժիչ» և «կախարդական» հատկությունները, ընդունված գները, թվարկում է թերությունները, արատները և դրանց վերացման ճանապարհը: Այս տեղեկությունները ազգագրական կարևոր արժեք ունեն, քանզի սերտորեն առնչվում են թանկարժեք քարերի վերաբերյալ գոյություն ունեցող ժողովրդական պատկերացումների և հավատալիքների հետ: Այսպես, ըստ պատմիչի՝

**Կայծը**, որ յաղուքն է (պարսկերեն) կամ ռուբինը (ֆրանսերեն) այն հատկություն ունի, որ եթե մարդ դնի բերանը, ծարավը կտրվում է... ով այն իր հետ ունենա, մարդկանց մոտ սիրով կընդունվի, նաև չարքերի կողմից զարկվածի համար առողջարար է (Դավր., էջ 456):

**Սարդիոնը**, որ սեյլանն է (թուրքերեն), ունի արյունահոսությունը կանխող հատկություն, կրակի մեջ չի այրվում, չի կորցնում գույնն ու փայլը: Դեղին սարդիոնը կոչում են թիլա (պարսկերեն՝ ոսկի), այլև պիճատի (պարսկերեն՝ նոնաքար) և **տպագիոն** (ֆրանսերեն) են ասում:

**Զմրուխտը** ով որ կրի, աչքերը չեն ցավի, երկար կապրի: Հակաթույն է: Զմրուխտի սևը եթե օձի առջև բռնես, տեսնելուն պես՝ աչքերին ջուր է իջնում, և օձը կուրամում է, իսկ եթե «քրքումով ծիրանաքարի վրա լավ մանրես և աչքերի վրա քաշես, աչքերի լույսը կավելացնի», աչքերը չեն ցավի, տեսողությունը կուժեղանա: Այն կրելու դեպքում մարդուն չեն մոտենա թունավորները: Կարիճը կամ օձը խայթելիս՝ զմրուխտը վարդաջրով հարում են և քսում կծածի վրա, առողջանում է, տազնապի ու մտահոգության մեջ չի ընկնում: Նաև ազատվում է հազից, կանխում արյունահոսությունը, փորացավը:

**Դասպիսին**, (հասնկաքար՝ կվարցի նստվածքային մանրահատիկ լեռնաքար), որ կանաչ, մի քիչ դեղնավուն է, շատ նայելուց աչքի լույսն ավելանում է, կամ եթե ծեծում ու քաշում են աչքերին, աչքերի քորը վերանում է: Բոլոր հիվանդությունների դեմ օգտակար է: Ով մոտը ունենա, սիրտը չի խփի: Օգտակար է կայծակի դեմ (Դավր., էջ 471):

**Եղնգաքարը**, որ ավմաստն է, հին ու նոր է լինում: Հիմը ավելի լավ է, ամեն քար մաշում է և կտրում, ինքը չի մաշվում, կայծի ու սարդիոնի պես կրակի մեջ չի մոխրանում: Բազկի վրա կրելու դեպքում հղի կնոջ ծննդաբերությունը հեշտանում է:

**Ալմաստը** լինում է տասներկու տեսակ, վեց երես ունի, որ կողմն էլ շրջես, երեք երես է երևում: Ալմաստի կարատը հինգ ցորենի հատիկի

քաշի է: Գոհարների թագավորը այմաստն է: Ալմաստ կրողը չարքից չի վախենում, փորացավ, քոր չի ունենում, մոռացկոտ չի լինում, հանգիստ է: Եթե սալի վրա մանրեն ու տան մարդու, մահադեղ է (Դավր., էջ 457):

**Ազաթը** (կատվի աչք կոչված քարը) կրող անձը բոր, քոստություն, քոր և նմանատիպ բաներ չի ունենա, ունեցվածքն ու շնորհքը չեն պակասի, մարդկանց մոտ ինքը և խոսքը կընդունվեն: Ինչքան էլ գինի խմի, խելքը չի կորցնի (Դավր., էջ 458):

**Սեդեսիկը** (սուտակ), որ լալն է [ամեթիստոս], դասվում է պատվական քարերի շարքին: Ըստ պատմագրի՝ ով հետը մեղեսիկ ունենա, ամեն հիվանդության դեմ օգտակար է, մեջքացավի համար լավ է, վատ երազ չի տեսնի, ճարահալած հատկություն ունի, տրամադրությունը բարձր կլինի: Մի հատկանիշ ևս՝ եթե բերանդ առնես, ծարավդ կկտրի: Եթե աչքի դեղերին խառնես, աչքի լույսին օգտակար է, սրատես է դարձնում (Դավր., էջ 458):

**Ոսկեքարը**, որ թիլան է [դեղին կայծը], եթե բարակ շորով փաթաթես և կրակ դնես վրան, շորը չի այրվի: Ով որ հետը ունենա, գիշերավախից ու երազատեսությունից զերծ կմնա և չար փորձանքից կազատվի:

**Բյուրեղը**, որ պիլորն է, եթե ծեծեն և հին խոցի վրա ցանեն, խոցը կառողջանա, իսկ եթե ատամները մաքրեն, ատամի ժանգը կտանի: Մոտը պահողը մղձավանջից և երազախաբից զերծ կմնա: Մեղմացնում է ցավը: (Դավր., 458):

**Գոճազը** [սուտակ], որ լաջվարդն է, երկնագույն կապույտ է, երակներ չունի և սպիտակ չէ, կրակի վրա գույնը չի փոխում, ոսկեգույն բծեր է ունենում: Եթե արքայաջրի մեջ զցես, նույն ժամին սպիտակում է և լինում է ինչպես ձյուն: Ստացվում է Ուզբեկստանից: Գրականության մեջ հանդիպում է նաև «արմինակուն» անվանումը, որը Արմենիա բառից է, քանզի նման է հայկականին, որն օգնում է մելամաղձության դեպքում (Դավր., 458):

**Սարգաթիտը**, անչափ օգտակար է ցերեկակույրին (գիշերը ավելի լավ է տեսնում, քան ցերեկը): Օգտակար է. եթե մարդը խայտավոր է (բորոտ): Ծեծում ու քացախով քսում են մաշկին, որով առողջանում է հիվանդը (Դավր., 468):

**Այծքարը**, որ «Պատմության» մեջ կոչված է հաջարութես, որ դեղթափն է և որը հայերը թունադեղ են կոչում, ունի առաջին հերթին դեղթափի հատկություն, իսկ տեսքը նման է կաղնեպտղի. երկարավուն և կլորավուն է, մեջը կորիզ, «հողագույն է, սևին է զարկում և մի քիչ էլ կարմրավուն է... Այդ [քարը] գտնում են վայրի քոշի [արու այծ] փորի մեջ... ասում են, օձից և **մուխալից** [հակաթույն բույս] բացի այլ կերակուր չունի: Այս պատճառով հիշյալ քարը առաջանում է քոշի փորում, դրա համար ազնիվ հակաթույն են [թիրյակ] ասում» [Դավր., 469]: Պատմագիրը հանգամանորեն նկարագրում է դեղթափ-հակաթույնի հատ-

<sup>1</sup> Կ. Պատկանովը առանձին ուսումնասիրություն ունի (տես Կ. Патканов, Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII в. СПб, 1973):

կոթյուններն ու կիրառման ձևերը: Նա գրում է. «եթե այն սամիթաջրով տրորեն և օձահարին քսեն՝ կօզնի և անմիջապես ցավը կմեղմացնի: Ամեն տեսակի զազանահարի օգնում է, չարը խափանում է»: Բացի այդ՝ «եթե տասներկու գարեհատի քաշով տան, սրտի թուլությանը օգնում է և մարդուն լավ ուժ է տալիս: Իր ընդունելու չափը կես դանգ է» [երկու գարեհատի կշիռ]։ ով ամեն օր սրանից կես դանգ ուտի, կազատվի ամեն չար փորձանքից ու ամեն մահացու դեղերից: Օգնում է նաև դյուրաբորբոքին [դյուրագագահին, դյուրագրգիռ հիվանդին], սրա պատճառը այն է, որ «դյուրաբորբոքը այդ բանը անում է ոչ իր բնույթով, իսկ այդ դեղի հատկությունը խիստ ջերմ է, իմացիր» [Դավր., 470]: Այժմքարը հակաթույն է, թույնի ազդեցությունը չեզոքացնող, վերացնող հատկություն ունի:

**Պատմություն.** «Պատմություն» պատմագրական երկում զգալի տեղ է հատկացված տոմարական հարցերին և դրանց վերաբերյալ անվերապահորեն կարևոր սկզբնաղբյուր է համարվում: Մինչև 363 թ. հայերը, ըստ Դավրիժեցու, Ձատիկը տոնում էին հրեաների նման. շաբաթվա որևէ օր: Հայոց տասը [561] թվականին կարգավորվեց հինգհարյուրակը, որով ուղղվեց Ձատիկը: Այն շարժական տոն է և նշվում է մարտի 22-ից հետո՝ լուսնի լրմանը հաջորդող կիրակի օրը: 561 թվականից հետո հայերը սկսեցին օգտվել Անդրեաս Բյուզանդացու կազմած տոմարական ցուցակներից, որոնք պատրաստված էր 200 տարվա համար: 561 թ. Դվինի եկեղեցական ժողովում որոշվեց 200 տարին լրանալուց հետո ընդունել հայոց նոր թվականություն 532 տարեշրջանի համար: Այս 532 տոմարական շրջանը կլորացնելով կոչում էին հինգհարյուրակ: Երկրորդ հինգհարյուրակը սկսվել է 1084 թ., իսկ երրորդը՝ 1616 թ.<sup>1</sup>:

Ընդարձակ նկարագրություններ կան եկեղեցական տոների և նրանցով հիշատակվող իրադարձությունների մասին, ինչպես, օրինակ՝ **Ձատիկի, Ծաղկազարդի, Խաչվերաց** տոների վերաբերյալ: Գրքում նշվում է, որ Ծաղկազարդի տոնը շարժական է, կապված է Ձատիկի հետ, կատարվում է մեկ շաբաթ առաջ՝ Ձատիկի նախորդող կիրակի օրը [Դավր., 272]:

Ավագ պասի հետ կապված, գրում է, Դավրիժեցին, այդ «օրերում Փիլիպոս կաթողիկոսը կատարեց Ս. Էջմիածնի հիմնարկելը 1103 (1654)» թվականին: Գրքում Ավագ պասը հիշատակված է նաև որպես **աղուհաց**: Ավագ պասը Մեծ Ձատիկի կամ Քրիստոսի հարության տոնի պասն է, որ շարժական է: Հին ժամանակներում պասը պահում էին միայն աղ ու հաց ուտելով, ուստի պասը կոչվում էր աղուհաց [Դավր., 266]: Մեկ այլ անգամ, նշելով վան քաղաքի ռմբակոծության մասին,

գրում է, թե «Աղուհացի առաջին շաբաթում սկսեցին թնթանոթածությունը, որը տևեց մինչև հոգեգալուստը»: Աղուհացը Մեծ Պահքն է, իսկ հոգեգալուստը Ձատիկից 50 օր հետո է, նշանակում է 100 օր է տևելու ռմբակոծությունը [Դավր., 393]: «Հայտնության հիսնակը» կամ «հիսունքը», որ նշանակում է Ձատիկից մինչև հոգեգալուստյան տոնը, կազմում է 50 օր: Հետաքրքիր է, որ պատմագիրը ամեն տոնի նկարագրությունը տալիս է այդ օրը տեղի ունեցած իրադարձությունները հիշատակելով: Պատմական անցքերը, շինարարական աշխատանքները, քաղաքական ու հոգևոր գործիչների կյանքի հետ կապված իրադարձությունները կապվում են ժողովրդական և եկեղեցական տոնական համակարգի հետ: Այս նույն կերպ պատմագիրը հաղորդում է, թե 1104 թ. [1655] մարտ ամսի աղուհացի հինգերորդ կիրակի օրը տեղի ունեցավ մեծ հայրապետ Տեր Փիլիպոս կաթողիկոսի վախճանը, որի պատճառով խափանվեց Ս. Էջմիածնի զանգակատան կառուցումը: Ըստ պատմագրի հաղորդման՝ կաթողիկոսին թաղեցին Ս. Յոհաննես եկեղեցու մեջ: Այդպես նաև գրում է, թե սույն թվի [1655] «ապրիլ ամսի ութի Ծաղկազարդի տոնին Ջուղայեցի Հակոբ վարապետին օծեցին Սուրբ Էջմիածնի կաթողիկոս: Նավասարդի տոնի առթիվ էլ գրում է, թե հայ բնակչության բռնազաղթը իրականացվեց, երբ նոր էր վերջացել հայոց թվականը և «մտել էին 1054 (1605) թվականի առաջին ամիսը» [Դավր., 43]: Նավասարդի տոնակատարությունը անշարժ տոմարով համընկնում էր օգոստոսի 11-ին: Նավասարդը հայոց առաջին ամիսն էր և տևում էր օգոստոսի 11-ից մինչև սեպտեմբերի 9-ը [Դավր. 333]: Այնուհետև գրում է, թե «մեր թվականության 1020 [1571] տարվա սկզբում, որ Նավասարդ ամսի 16-ն էր, Ս. Հակոբի պասի ուրբաթ օրը Սուրբ աջը բերվեց Սուրբ Խաչ Աղթամար, ի պահպանություն բոլոր հավատացյալներիս [Դավր., 333]: Մեկ այլ առիթով էլ հաղորդում է, թե բռնազաղթը հիմնականում ընթացավ աշնանը՝ **Սուրբ Խաչ** տոնից հետո: Իսկ **Սուրբ Խաչ** տոնը հայոց մեջ նշվում է սեպտեմբերի 14-ին հաջորդող կամ նախորդող կիրակի օրը: **Խաչվերացի** այդ տոնին, պատմագրի մեկ այլ հաղորդման համաձայն, կատարվել է Երնջակի Ս. Կարապետի վանքի նոր ավարտած գմբեթի խաչի, զանգակատան, նաև մյուս կառույցների [1658 թ.] օրհնման արարողությունը [Դավր. 274]: 1658 թ. Խաչվերացի տոնին օրհնվել է նաև Ս. Էջմիածնի զանգակատան շինարարության ավարտը: Խաչվերացի տոնը պատմագիրը հիշատակում է Սուրբ Խաչ անվամբ [Դավր., 60]:

Պատմագիրը ակնարկ ունի նաև **Համբարձման** տոնի վերաբերյալ: Պատմելով Կարբի գյուղում ջալալիների [թուրք ասպատակիչներ] գործած ոճիրների մասին՝ գրում է, թե «նրանք այստեղ մնացին մինչև գարուն՝ մինչև Համբարձման տոնի օրերը»: Իսկ **Համբարձման** տոնը, որ շարժական է, նշվում է Ձատիկից քառասուն օր անց [Դավր., 76]:

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Լ. Սարգսյան, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը (4-8-րդ դար), Երևան, 2010 թ., էջ 57-99:

Պատմագիրը խոսում է շահի կողմից Մելիքսեթ կաթողիկոսին «Աստվածածնի պասի օրերին» [օգոստոսի կեսերին] տանջանքների ենթարկելու մասին [Դավր., 168]: Ասվում է նաև, որ «սուրբ Գրիգոր Լուսավորչի պասը» պահում էին ամռան օրերին՝ հունիսի երկրորդ կեսին՝ ի պատիվ Խորվիրապից նրա դուրս գալու [Դավր., 404]:

Պատմագիրը հաղորդում է, որ իր կառավարման տարիներին Շահ Աբասը որոշ ժամանակ հայերի նկատմամբ սիրաշահող քաղաքակառուցություն էր վարում, թույլ էր տալիս նրանց մնալ իրենց հավատքին ու սովորույթներին. «Յոթար կամքով հրամայեց եկեղեցիներ շինել և որ Ջուղայում ու գյուղերում, նաև քաղաքի բերդի մեջ ... մեծամեծ տոների օրերին՝ Հարության, Համբարձման և այլ տոներին, անգամ շահը գալիս էր եկեղեցիներ և ուրախանում քրիստոնյաների հետ: Քրիստոնեական ամեն կարգ ու դավանություն, քրիստոնյաները կատարում էին համարձակորեն, զանգեր զարկել, ժամասացություն անել, ջրօրհները մեծախումբ հանդեսով տոնել» և այլն [Դավր., 62]:

*Պավանաբանական հարցեր, հավատափոխություն:* Բավականին ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Դավրիժեցին Լվովի հայության (կաթոլիկ և առաքելական դավանանքի) երկու և մեկ բնության, նաև եվտիքեական հերձվածով մոլորված հայության դավանաբանական հարցերի մասին:

Նա ցավով է արձանագրում, որ Լվովի հայ եկեղեցում խափանված էին հայ եկեղեցու յոթ խորհուրդները՝ ապաշխարությունը, հաղորդությունը, այցելությունը հիվանդներին և այլ կարգեր [Դավր., 299]: Դրա համար «Շատ երկյուղած ու հայրենի օրենքների համար նախանձախնդիր մարդիկ մեկնեցին տներից ու տեղերից և ելան բնիկ երկրից հեռացան՝ անջատված ընտանիքներից, ազգականներից, պանդուխտ ու տարագիր շրջագայելով օտար երկրում և այդպիսի կյանքով հեծելով ու հոգոց հանելով վախճանվեցին [Դավր., 302]»: «Պատմության» մեջ մանրամասն շարադրված է Լվովահայերի՝ կաթոլիկության տարածմանը ցույց տված դիմադրության պատմությունը, որը փաստորեն պայքար էր հանուն ազգային անկախության:

Դավրիժեցին բացասաբար էր վերաբերվում եկեղեցու այն սպասավորներին, ովքեր ապրում էին շքեղության մեջ և ունեին բարեկեցիկ կենցաղ: Նա ասում է, որ հայոց վանքերի «յուրաքանչյուր սևագլուխ ուներ իր սեփական հարստությունը՝ այգին և բուրաստանը, փեթակը և տունը և մառանը, և ամբարները» [Դավր., 228]: Հոգևորականները ապրում էին աշխարհիկ մարդկանց կենցաղով: «Բնավ չգիտեին, որ կրոնավորը պարտավոր է վեղար ու փիլոն կրել կամ կոշտ ու բրդյա հագուստ հագնել, այլ որպես աշխարհական և մարմնավոր իշխաններ, թանկագին հագուստներով պնդվում էին, անդրավարտիք, կապա, թանկագին գլխարկ գլուխներին և մեկնոց էին վրաներն առնում: Նաև չէին համա-

րում, թե վանականները պարտավոր են պասով, ծոմական տքնությամբ կյանք վարել, այլ ամբողջ տարին անխտիր ուրիշ ճաշեր, միս էին ուտում և գինի խմում» [Դավր., 228], դժգոհում է պատմիչը: Փոխարենը դավատանքով ու պատկառանքով է խոսում «պարկեշտ ու սրբակրոն վարքով, ոչ պերճապաճույճ և փափուկ հագուստով, որպես այդ ժամանակ ուրիշներն էին, այլ կոշտազգեստ, շաբաթ և կիրակի օրերին պաս պահող» Գրիգոր վարդապետի մասին, ով «պասը լուծում էր նավակալիցի կերակուրներով՝ գերծ մսից ու գինուց» [Դավր., 227]:

Դրվատանքի են արժանի նաև պատմագրի այն հաղորդումները, որոնք նվիրված են «հավատի նահատակներին», նրանց անձնազոհ պայքարին ընդդեմ մահմեդական հոգևորականության ճնշման և հանուն ազգային կրոնի: Դավրիժեցին բերում է բազմաթիվ ծաղր ու ծանակի, ֆիզիկական ու բարոյական խոշտանգումների բազմաթիվ փաստեր, որոնց ենթարկվում էին հայ եկեղեցու հոգևոր հայրերը:

Շահ Աբասը Ա-ից մեծ ջանքեր պահանջվեցին գաղթականության ետդարձն արգելելու համար: Սակայն արգելելու ամենամեծ միջոցը հնուտ պետական գործիչը տեսնում էր քրիստոնյաներին սիրաշահելու մեջ: Նրա «քրիստոնեական» խոշոր քայլերից էր եկեղեցիներ կառուցելու թույլտվությունը: Դավրիժեցին այս փաստը դիտում էր իբր հայերին իրանի հետ կապող օղակներից մեկը:

Շահ Աբասը 1620 թվականից անցավ Պարսկաստանի հայ բնակչությանը թլպատելու և մահմեդականացնելու քաղաքականությանը, որն իրագործում էր ամենայն դաժանությամբ: Թլպատող պաշտոնյաները շրջում էին գավառից գավառ՝ Փարիայում ու Բուրվարիում, և ուն գտնում էին թլպատում էին՝ թե՛ աշխարհական, թե՛ հոգևորական [Դավր., 133]: Այնուհետև պատմագիրը ավելացնում, «թե մահմեդականություն ընդունածներից շատերը առաջվա նման մնացին քրիստոնեական հավատքին, և էլ ավելի հաստատուն, քան առաջ էին. «Որովհետև երեսնաներին մկրտում էին մեռելներին քահանաներով էին թաղում, միշտ եկեղեցի գնալով աղոթում էին, խոստովանելով հաղորդում էին» [Դավր., 124]:

**Рафик Нагапетян, Армянские этнографические сведения в “Истории” Аракела Даврижеци, – В данной статье представлены многочисленные, разнообразные сведения историка Аракела Даврижеци, касающиеся экономического быта, в частности, ремесел, торговли, материальной и духовной культуры, народной медицины, общественно-семейных отношений армянского населения XVII века. Книга содержит богатый этнографический материал.**

**Rafik Nahapetyan**, Armenian ethnographic data in the “History” of Arakel of Tavriz, – The article is dedicated to the numerous pieces of information on economic life of Armenian people in the XVII-th century, especially crafts, trade, culture, folk medicine, social structure and spiritual culture. The book is a rich storage of written ethnographic materials.

